Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ <<Արարատի մարզի Շահումյան գյուղի Արտակ Համբարձումյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի **Հայոց լեզու և գրականություն (26 ժամ),Պատմություն (13 ժամ),Կենսաբանություն (8 ժամ)** առարկայի ուսուցչի թափուր տեղի համար :

Մրցույթը անցկացվում է երկու փուլով ՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի :Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:Մրցույթն անցկացնելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում(Ձև 1) ,մեկ լուսանկար 3x4 չափի:
2. Բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) :
3. Անձնագրի պատճենը
4. <<Հանրակրթության մասին>>ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը ՝առկայության դեպքում:
5. Ինքնակենսագրություն (Ձև 5):
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ:
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ:
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր՝ առկայության դեպքում:
9. Որակավորման տարրակարգ ունենալու դեպքում ՝հավաստող փաստաթուղթ:
10. Հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավել տոկոս ցուցաբերած լինելու մասին տեղեկություն:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են **2025թ. սեպտեմբերի 3-ից 16-ը** ներառյալ ժամը՝ 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա ՀՀ Արարատի մարզի Շահումյան գյուղի Արտակ Համբարձումյանի անվան միջնակարգ դպրոցում **2025թ. սեպտեմբերի 23-ին ժամը 14:30**:Հասցե՝ Արարատի մարզ,գ.Շահումյան, Ա.Համբարձումյան 5:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 095-222-111 հեռախոսահամարով: